ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ Ա.Երեմյան

ԿՏՊՔ կառավարման խորհրդի նախագահ

15 03 2024 թվական

ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

(վերանայված)

Հրազդան 2024

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Դասալսումների անցկացման և վերլուծության կարգը սահմանում է ԿՏՊՔ-ում դասալսումների նպատակների, խնդիրների, կազմակերպման, անցկացման, դասի արդյունքների քննարկման և վերլուծության կարգը:

1.2. Սույն կարգը մշակված է «Կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքների, ԿՏՊՔ Կանոնադրության հիման վրա:

1.3. Սույն կարգը մշակվում և քննարկվում է ԿՏՊՔ Ուսումնամեթոդական խորհրդի և հաստատվում է ԿՏՊՔ –ի Կառավարման խորհրդ կողմից:

1.4. Կարգում փոփոխություններն ու լրամշակումները իրականացվում են նույն կարգով:

1.5. Դասալսումները ԿՏՊՔ-ի ուսումնադաստիարակչական, դասավանդման և ուսումնառության գործընթացում իրականացվող աշխատանքների ներքոլեջային վերահսկողության, դրանց արդյունավետության գնահատման և բարելավման միջոցառումների մշակման և իրականացման ձև են:

2. Դասալսումների անցկացման նպատակը

Դասալսումները հանդիսանում են դասավանդման և ուսումնառության որակի մշտադիտարկման, արդյունավետության վերահսկման, գնահատման և բարելավման միջոց, և բխում են ԿՏՊՔ-ի որակի ապահովման համակարգի քաղաքականությունից, ԿՏՊՔ-ի ռազմավարությունից, հավատարմագրման չափանիշներից, ներքին և արտաքին գնահատումների միջոց են, և վարչական ու ղեկավար կազմի գործառույթների շրջանակում են:

Դասալսումների արդյունքների վերլուծությունները միտված են քոլեջի ուսումնական գործընթացների բարելավմանը և պետք է բխեցվեն այդ աշխատանքների արդյունավետ իրականացման և ապահովման սկզբունքից:

2.1 ԿՏՊՔ-ում դասալսումների անցկացման նպատակներն են՝

- կարիքի գնահատում,
- փորձի փոխանակում,
- կատարված դիտարկումների և վերլուծությունների արդյունքների հիման վրա դասավանդման և ուսումնառության գործընթացներում առկա խնդիրների և կարիքների վերհանում, որակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում,
- դասավանդման և ուսումնառության որակի և արդյունավետության կատարելա-գործում,
- դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժամեթոդական հմտությունների զարգացման օժանդակում,
- դասախոսի մանկավարժական վարպետության կատարելագործման աջակցություն,
- ուսանողակենտրոն ուսուցման խթանում,

- դասավանդման լավագույն փորձի բացահայտում և տարածում:

2.2 Կարիքի գնահատման նպատակով իրականացվող դասալսումները անհրաժեշտ են քոլեջի դասավանդման և ուսումնառության որակի վերհսկողության, արդյունավետության գնահատման և բարելավման նպատակով:

Կարիքի գնահատման նպատակով իրականացվող դասալսումների միջոցով մշտադիտարկվում և գնահատվում են հետևյալ գործընթացները՝

- ուսանողների ուսումնառության որակի գնահատում,
- ուսանողների ներգրավվածության, մասնակցության գնահատում,
- ուսանողների պատրաստվածությունը դասին,
- ուսանողների իրավունքների պաշտպանության և առողջության պահպանման գնահատում,
- ուսանողների ակադեմիական կարողունակությունների զարգացման գնահատում,
- ուսանողների դաստիարակչական կարողունակությունների զարգացման գնահատում,
- ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման թափանցիկության, օբյեկտիվության գնահատում,
- ռեսուրսների կառավարման գնահատում (ինչպես է դասախոսը կարողանում կառավարել առկա ռեսուրսները, այդ թվում՝ ուսանողների արդյունավետ ընդգրկումը դասապրոցեսին),
- ուսումնանյութական ռեսուրսների որակի և արդյունավետության գնահատում,
- տրամադրվող ուսումնաօժանդակ նյութերը, հանձնարարականները
- դասի բարոյահոգեբանական մթնոլորտի գնահատում,
- պետական չափորոշիչների և կրթական ծրագրերի կատարման չափանիշների պահանջների կատարման գնահատում,
- ՏՀՏ ինտեգրման գնահատում,
- ժամանակակից հմտությունների զարգացման գնահատում,
- դասավանդողի դասին պատրաստվածության գնահատում,
- դասավանդողի էթիկայի կանոնների պահպանման գնահատում,
- դասավանդողի մանկավարժամեթոդական պատրաստվածության և ճկունության գնահատում,
- դասավանդողի դասավանդման կարողությունների գնահատում,
- ուսանող-դասախոս համագործակցության մակարդակը, հետադարձ կապ

2.3 Փորձի փոխանակման նպատակով իրականացվող դասալսումները հանդիսանում են դասավանդողների մասնագիտական կարողունակությունների ուսումնասիրման ձև, և ցանկացած պարագայում արդյունավետ են դասալսողի համար՝ սեփական մասնագիտական կարողունակությունների և մոտեցումների լրամշակման և բարելավման տեսանկյունից:

Փորձի փոխանակման նպատակով իրականացվող դասալսումների միջոցով ուսումնասիրվում են հետևյալ գործընթացները՝

- մանկավարժամեթոդական նոր տեխնոլոգիաների, ռազմավարությունների (մեթոդներ, հնարներ) ուսումնասիրում,
- ՏՀՏ ներդրման ուսումնասիրում,
- ռեսուրսների կառավարման ուսումնասիրում,
- ուսանողների հետ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ուսումնասիրում,
- դասավանդման այլընտրանքային ձևերի ուսումնասիրում:

3. Դասալսումների խնդիրները

3.1. Ուսումնասիրել և գնահատել դասավանդման մեթոդների արդյունավետությունն ու համապատասխանությունը կրթական ծրագրերի վերջնարդյունքներին,

3.2. վերհանել դասավանդողի մասնագիտական և մանկավարժական կարիքները,

3.3. գնահատել դասավանդողի կողմից բարեվարքության և ակադեմիական ազնվության պահպանումը,

3.4. գնահատել դասավանդման որակը և արդյունավետությունը

3.5. ուսումնասիրել մանկավարժական լավագույն փորձը,

3.6. սովորողների ուսումնառության որակի մշտադիտարկումը և բարելավումը:

4. Դասալսումների կազմակերպման և անցկացման տեսակները

4.1. հաստատության դասախոսական կազմը իրականացնում է դասալսումներ միայն փորձի փոխանակման և վերոշարադրյալ գործընթացների ուսումնասիրման համար,

4.2. փորձի փոխանակման նպատակով իրականացվող փոխադարձ դասալսումների ժամանակացույցը կազմվում է ԿՏՊՔ-ի ուսումնական մասի կողմից յուրաքանչյուր կիսամյակի համար,

4.3.փորձի փոխանակման նպատակով իրականացվող փոխադարձ դասալսումները իրականացվում են նախապես դասալսվող դասախոսին իրազեկելով դասալսումից առնվազն 3 օր առաջ,

4.4. փոխադարձ դասալսումներ իրականացվում են ուսումնառության և դասավանդման գործընթացի, լավագույն փորձի ուսումնասիրման, դասավանդողների միջև դասավանդման փորձի փոխանակման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հարցում համագործակցային միջավայր ստեղծելու համար,

4.5. փորձի փոխանակման նպատակով իրականացվող փոխադարձ դասալսումներ կարող են իրականացնել նաև հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, վարչական կազմը, ովքեր ևս հանդիսանում են դասախոսական կազմի ներկայացուցիչներ,

4.6. կարիքի գնահատման նպատակով դասալսումներ կարող են իրականացնել՝

- հասատատության տնօրենը,
- հաստատության տնօրենի տեղակալները՝ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով,
- որակի կենտրոնի ղեկավարը,
- հանրակրթության և բժշկական մասնագիտությունների բաժինների վարիչները,
- ամբիոնի վարիչները,
- դուալի ղեկավարը,
- ուսումնամեթոդական խորհուրդը,
- դասը լսող մասնագետը՝ ըստ անհրաժեշտության,
- ըստ կարիքի՝ դասալսում կարող է իրականացնել նաև կուրսղեկը՝ կուրսղեկների կանոնակարգին համապատասխան՝ իրենց կուրսղեկական խմբերում սովորողների դաստիարակչական, կարողունակությունների, ուսումնառության որակի, դասերին ուսանողների ներգրավվածության, մասնակցության, դասին պատրաստվածության գործընթացների ուսումնասիրման նպատակով,
- ըստ կարիքի՝ դասալսում կարող է իրականացնել նաև ծնողը՝ հաստատության ղեկավար կազմի համաձայնությամբ և ներկայությամբ, եթե նախապես ներկայացվել է հաստության ղեկավար կազմին որևէ գործընթացի վերաբերյալ դիտարկում:

4.7.կարիքի գնահատման նպատակով իրականացվող դասալսումները կարող են իրականացվել ինչպես պլանավորված, այնպես էլ չպլանավորված՝ ըստ կարիքի,

4.8. կարիքի գնահատման նպատակով դասալսողները կարող են դասալսումների ժամանակացույցը կազմել անհատական՝ տնօրինության հետ համաձայնեցված՝ իրենց տարեկան աշխատանքային պլանավորումներին և նպատակներին համապատասխան՝ պլանավորված և չպլանավորված(ըստ կարիքի),

4.9. կարիքի գնահատման նպատակով դասալսումներ կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ նախապես ձևավորված հանձնաժողովներով, որոնցում կարող են ընդգրկված լինել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, հաստատության տնօրենը, փոխտնօրենները, տվյալ դասընթացը դասավանդող մասնագետ, մեթոդիստ, հրավիրյալ մասնագետ՝ ըստ կարիքի, հոգեբան՝ ըստ կարիքի(ցանկալի է 3-5 անդամ) ,

4.9.1. կարիքի գնահատման նպատակով իրականացվող դասալսումները կարող են լինել հետևյալ տեսակի՝

- **ընտրովի դասալսումներ՝** կազմակերպվում են առանց տվյալ դասը վարող դասախոսին նախապես տեղեկացնելու՝ դասավանդողի մանկավարժական վարպետության և ճկունության դիտարկման և գնահատման նպատակով,
- **թեմատիկ դասալսումներ՝** հնարավորություն են տալիս ուսումնասիրելու և գնահատելու դասախոսի դասավանդման արդյունավետությունը նույն մոդուլի կամ առարկայի դասավանդման գործընթացում տարբեր խմբերում,
- **զուգահեռ դասալսումներ՝** հնարավորություն են տալիս ուսումնասիրելու տարբեր դասախոսների դասավանդման արդյունավետությունը նույն մոդուլի կամ առարկայի դասավանդման գործընթացում,
- **համալիր դասալսումներ՝** նպատակն է միայն միևնույն կուրսում այդ օրվա բոլոր դասերի դիտարկումը,
- **բաց դասերի դասալումներ** ՝ իրականացվում են դասավանդման նոր մեթոդներ և մանկավարժական հնարքներ փորձարկելու, ավելի փորձառու մասնագետների և գործընկերների կարծիքը, խորհուրդները և երաշխավորությունը ստանալու, դասավանդման փորձի ուսումնասիրման և ընդհանրացման, տարածման նպատակով,
- **ցուցադրական դասերի դասալսումներ** ՝ իրականացնում են ավելի փորձառու դասավանդողները՝ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպումը, դասավանդման մեթոդիկան, տեխնիկական ժամանակակից միջոցներով դասավանդումը, մեթոդական նոր արդյունավետ հնարքներ ներկայացնելու և դասավանդման դրական փորձը փոխանցելու նպատակով,
- **նպատակային դասալսումներ՝** հնարավորություն են տալիս ուսումնասիրելու և գնահատելու ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը՝ ելնելով սույն կարգի դասալսման՝ «Կարիքի գնահատում» նպատակի շրջանակում ուսումնասիրվող և գնահատվող գործընթացներից, որոնք նպատակ ունեն վերհանելու ուսումնառության և դասավանդման գործընթացում առկա խնդիրները, կարիքներին համապատասխան մշակել միջոցառումների ծրագիր:

5. Դասալասումների կազմակերպման հաճախականությունը և անցկացման պայմանները, դասի դիտարկումները

5.1. պլանավորված դասալսումներ կազմակերպելու համար ուսումնական տարվա սկզբին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, կարիքի գնահատում իրականացնող դասալսողները քննարկում, կազմում և հաստատում են դասալսումների ժամանակացույցը՝ ուսումնամեթոդական կամ մանկավարժական խորհրդի նիստում: Պլանավորված դասալսումներ անցկացվում են յուրաքանչյուր դասավանդողի մոտ յուրաքանչյուր կիսամյակում նվազագույնը մեկ անգամ: Դասալսումների

ժամանակացույցերը կազմվում են կիսամյակային կտրվածքով, ուսումնական տարին սկսելիս, տարեկան աշխատանքային պլաններին կից,

5.2. կարիքի գնահատման նպատակով պլանավորված դասալսումներն անց են կացվում յուրաքանչյուր դասավանդողի մոտ կիսամյակում նվազագույնը երկու անգամ,

5.3. կարիքի գնահատման նպատակով իրականացվող չպլանավորված դասալսումները կարող են կազմակերպվել հաստատված ժամանակացույցից դուրս,

5.4. փոխադարձ դասալսումները համարվում են պլանավորված և անցկացվում են ամբիոնի դասախոսական կազմի կողմից, կախված դասախոսի ժամանակային գրաֆիկից, կարող են իրականացվել կիսամյակի ընթացքում դասախոսին նպատակահարմար ժամկետներում՝ պահպանելով ուսմասի կողմից սահմանված պարտադիր դասալսումների քանակը՝ նախապես դասալսվող դասախոսին դասալսման մասին իրազեկելով ,

5.5. փորձի փոխանակման նպատակով դասալսումներ կարող են իրականացվել նաև ուսումնական մասի կողմից սահմանված դասալսումների պարտադիր գրաֆիկից դուրս՝ դասախոսների փոխահամաձայնությամբ՝ ուսումնական մասին իրազեկելով, եթե դասախոսն ունի փորձի փոխանակման կամ լավագույն փորձի ուսումնասիրման կարիք,

5.6.չպլանավորված դասալսումների անցկացման դեպքում առնվազն երեք աշխատանքային օր առաջ տեղեկացվում է դասավանդողին,

5.7. դասալսումները վերլուծվում են Հավելված 1-ում ներկայացված ձևաթղթերով (փոխադարձ դասալսումների ձևաթուղթ (ձևաթուղթ 1), կարիքի գնահատման ձևաթուղթ (ձևաթուղթ 2)), հանձնախմբերի կամ ստորաբաժանման ղեկավարների, տնօրենի, փոխտնօրենների, բաժնի վարիչների դասալսումների արդյունքների վերլուծությունների ամփոփ տվյալների գնահատման ձևաթուղթ (ձևաթուղթ 3),

5.8. կարիքի գնահատման նպատակով իրականացվող դասալսումների ժամանակացույցը և հանձնախմբի անդամների ցանկը հաստատում է տնօրենը հրամանով,

5.9 հանձնախմբի կազմը փոփոխական է, այն ձևավորվում է յուրաքանչյուր դասալսման համար առանձին՝ դասալսումների ժամանակացույցը հաստատելուց առնվազն մեկ շաբաթ հետո:

6. Դասալսողին ներկայացվող պահանջները

6.1. Դասալսողը դասին պետք է ներկայանա մինչև դասը սկսելը՝ դասապրոցեսը չխաթարելու և ուսանողների ուշադրությունը չշեղելու համար,

6.2. դասը լսողի համար տրամադրվում է առանձին աթոռ, որը տեղադրված պետք է լինի ուսանողական նստարաններից հետո, դասալսողին չի թույլատրվում նստել ուսանողի կողքին,

6.3. դասալսողին չի թույլատրվում միջամտել դասին, հարցեր ուղղել ուսանողներին, զրուցել նրանց հետ, կամ որևէ դիմախաղով ցույց տալ վերաբերմունքը դասապրոցեսի ընթացքին կամ դասախոսին, կազմակերպել քննարկումներ և տալ գնահատականներ դասալսման ընթացքում: Եթե անգամ դասը լսողը նկատում է մասնագիտական գիտելիքի ոչ ճիշտ մատուցում լսարանին, իրավունք չունի միջամտելու, դիտարկումները պետք է արվեն դասի ավարտից հետո,

6.4. դասալսողին չի թույլատրվում զբաղեցնելու ուսանողներին դասամիջոցն ազդարարող զանգից հետո,

6.5. արգելվում է դասի ընթացքի և կառուցվածքի փոփոխությունը դասը լսողի խնդրանքով,

6.6. արգելվում է դասի վերլուծությունը կատարել դասամիջոցին, ինչպես նաև ուսանողների ներկայությամբ ,

6.7. դասը լսողը գրառում է կատարում դիտարկման արդյունքների մասին մատյանում կամ ձևանմուշում,

6.8. տեսաձայնագրումը թույլատրվում է տվյալ դասախոսի թույլտվությամբ և առանց դասի ընթացքը խանգարելու,

6.9. նպատակահարմար չէ դասալսողի լսարանից դուրս գալը մինչ դասի ավարտը,

6.9.1. դասալսողը կարող է ղեկավար կազմի համաձայնությամբ տվյալ խմբի ուսանողներին լրացուցիչ առաջադրանք տալ դասից հետո (ոչ տվյալ դասամիջոցին) ՝ ուսումնառության որակի գնահատման նպատակով՝ նախապես արված և քննարկված դիտարկման համաձայն,

6.9.2. նպատակահարմար է , որ դասալսողը տիրապետի դասալսման ձևաթղթով նախատեսվող չափանիշների գնահատման և վերլուծության առանձնահատկություններին:

7. Դասալսումների հանձնախմբին ներկայացվող պահանջներ

7.1. Դասալսումն իրականացնող հանձնախմբի անդամները պետք է՝

- ծանոթ լինեն սույն կարգի Հավելված 1-ում ներկայացված դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծման օրինակելի ձևաչափերին,
- նախապես ծանոթանան մասնագիտության կրթական ծրագրին, դասընթացի ծրագրում ներկայացված դասի նպատակներին ու խնդիրներին, թեմային և ուսումնական նյութերին,
- պահպանեն մասնագիտական էթիկայի կանոնները՝ ժամանակին ներկայանան դասալսման, չխոչընդոտեն դասի բնականոն ընթացքը և պահպանեն սույն կարգի 6-րդ կետով դասալսողին ներկայացվող պահանջները:

8. Դասալսումների արդյունքների դիտարկումները, վերլուծությունը, արձանագրումը և կիրառումը

8.1. Դասալսման արդյունքների դիտարկումներում և վերլուծություններում պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

- բարիդրացիական, գործընկերային հարաբերություններ, բարեվարքության նորմերի պահպանում,
- դասերի վերլուծության և դիտարկումների մեջ լինել անաչառ, անկողմնակալ, օբյեկտիվ և արդարամիտ՝ նկատելով և արձանագրելով և՛ դրականը, և՛ թերացումները,
- ընդունել դասալսումները որպես դասավանդման, ուսումնառության և մանկավարժական վարպետության կատարելագործման ուղի,
- դասալսման ընթացքում գնահատել դրականը,
- դասի արդյունքների քննարկման գործնական հաղորդակցում, համագործակցություն , համատեղ ջանքերով թերացումների պատճառները միասին հաղթահարելու պատրաստակամություն,
- չհիասթափվել դասի արդյունքների գնահատման ոչ բավարար արդյունքներից, չխուսափել գործընկերների դիտարկումներից և խորհուրդներից. դիտարկումներն ու ձախողումները ընդունել որպես մարտահրավեր, վերլուծել թերացումների պատճառները՝ բարելավելով հետագա աշխատանքները,
- մանկավարժական փորձի ձեռքբերում,
- ցանկացած պարագայում, անկախ դասի վերլուծության արդյունքներից և դիտարկումներից՝ աջակցել դասավանդման և ուսումնառության որակի բարելավմանը և դասախոսի մանկավարժամեթոդական և մասնագիտական որակների կատարելագործմանը.
- դասերի վերլուծությունների արդյունքները կիրառավում են բացառապես սույն կարգի 3-րդ կետով սահմանված խնդիրների արձանագրման և լուծման նպատակով:

8.2. Դասի վերլուծությունը

- դասը լսողը պետք է վերլուծի դասը,
- քննարկումը պարտադիր իրականացվում է դասավանդող դասախոսի ներկայությամբ, ով կարող է ներկայացնել իր առարկությունները,

- դասերի վերլուծությունը պետք է կատարվի սույն կարգի Հավելված 1-ում զետեղված ձևաթղթերի համաձայն (անհրաժեշտության դեպքում կարող են մշակվել և կիրառվել այլ ձևաթղթեր)
- տնօրենի, փոխտնօրենների, կառուցվածքային ստորաբաժանումների, հանձնախմբերի , ամբիոնի և բաժնի վարիչների կողմից կարիքի գնահատման նպատակով իրականացված դասալսումների վերլուծությունների արդյունքների ամփոփ տվյալները պետք է քննարկվեն խորհուրդների, ամբիոնի ամփոփիչ նիստերին՝ կողմերի համաձայնությամբ՝ առաջավոր փորձի տարածման և փորձի փոխանակման նպատառումներով,

- դասալսումների արդյունքները պետք է վերլուծել նույն օրը, անհրաժեշտ է դասի վերլուծության համար տրամադրել բավականին ժամանակ, չի թուլատրվում դասի վերլուծությունը կատարել դասամիջոցին,
- փոխադարձ դասալսումների արդյունքների քննարկումները մանկավարժական կազմը կարող է քննարկել ամբիոնի նիստերին՝ երկու կողմի համաձայնեցմամբ՝ լավագույն մանկավարժական փորձի փոխանակման նպատակով,
- դասալսումների արդյունքները կարող են քննարկվել ամբիոնների նիստերին՝ լավագույն փորձի տարածման նպատակով,
- դասալսումների արդյունքները կարող են քննարկվել հանձնախմբերի դեպքում իրականացված դասալսումների պարագայում՝ դասավանդող դասախոսի ներկայությամբ և համաձայնությամբ,
- դասի վերլուծության ընթացքում չի թույլատրվում այն մարդկանց միջամտությունը, ովքեր տվյալ դասին ներկա չեն եղել,
- դասավանդող դասախոսը իրավունք ունի դասալսողի վերլուծությունից առաջ ներկայացնել դասի ինքնավերլուծությունը, ելույթ ունենալ ամփոփիչ խոսքով և արտահայտել իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը այս կամ այն դիտարկման վերաբերյալ,
- դասի վերլուծությունը ցանկալի է սկսել դրական դիտարկումներից,
- դասը լսողը կարող է տալ երաշխավորություններ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ,
- դասի վերլուծության ժամանակ չի կարելի դասախոսի գործունեությունը համեմատել այլ դասախոսների գործունեության հետ կամ պիտակավորել դասախոսին,
- դասի վերլուծությունը նպատակաուղղված է գործընթացի բարելավմանը՝ անկախ դասի արդյունքների վերլուծություններից և գնահատականներից(կարիքի գնահատման դեպքում):

8.3. Դասալսումների արդյունքների վերլուծության նպատակները և խնդիրները

Դասալսումների արդյունքների վերլուծության նպատակներն են՝

- բացահայտել ուսումնական գործընթացի կազմակերպման կարիքները, խնդիրներն ու թերությունները,
- ապահովել դասավանդման մեթոդների համապատասխանությունը կրթական վերջնարդյունքներին,
- տարածել դասավանդման լավագույն փորձը,
- նպաստել ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը,
- բարելավել ուսումնառության և դասավանդման որակը ,
- նպաստել սովորողների կարողանակությունների և հմտությունների արդյունավետ ձևավորմանը, ինքնուրույն հետազոտական աշխատանքների խթանմանը:

Դասալսումների արդյունքների վերլուծության խնդիրներն են՝

- դասընթացի վերջնարդյունքների և դասի նպատակների ու խնդիրների համապատասխանության ստուգումը,

- դասավանդողի մասնագիտական և մանկավարժական կարիքների վերհանումը,
- դասավանդման մեթոդների, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը,
- ուսումնառության գործընթացի արդյունավետության գնահատումը,
- դասավանդողին աջակցում, դասավանդման և ուսումնառության որակի բարելավումը,
- դասավանդման առաջավոր փորձի տարածումը:

B.4 Դասալսումների արդյունքների արձանագրություն

- դասալսումների արդյունքների արձանագրությունը կազմում է դասալսողը դասալսման օրը,
- դասալսումների արդյունքների արձանագրությունը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝
  - առարկայի/մոդուլի անվանումը
  - կուրսը, խումբը,
  - ուսանողների թիվը լսարանում,
  - ներկա ուսանողների թիվը,
  - դասը վարող դասախոսի անունը և ազգանունը,
  - դասի թեման, դասի նպատակը,
  - դասի ընթացքի նկարագրությունը,
  - դասը լսողի որոշմամբ կարող է պարունակել դասի մասին այլ տեղեկատվություն,
  - դասալսողի մեկնաբանությունները, եզրակացությունները և առաջարկությունները դասի մասին,
  - դասը վարող դասախոսի հատուկ կարծիքը (առկայության դեպքում),
  - դասալսումների արդյունքների լրացված և ստորագրված արձանագրությունները պահվում են ամբիոններում,
  - արձանագրությունները պահվում է դասը լսողի մոտ մեկ ուսումնական տարի,
  - ներքին և արտաքին գնահատումների ժամանակ կատարված դասալսումների արդյունքների արձանագրությունները պահվում են ստուգում իրականացրած մարմնի կամ արտաքին գնահատում իրականացրած անկախ կազմակեպության մոտ,
  - դասալսումների արդյունքների արձանագրությունները, ըստ անհրաժեշտության, կարող են քննարկվել ուսումնամեթոդական և մանկավարժական խորհրդի նիստերին :
- փաստաթղթերի պահպանման ժամկետը 3 տարի է:

Տնօրենի պ/կ՝ Վ.Թովմասյան